

ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՆԱՐԵԿԱՑՈՒ «Ի ՍՈՒՐԵՆ ՅԱԿՈՔ» ՆԵՐՔՈՂԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Յ. Ղ. ՄԻՐՋՈՅԱՆ

Թեև ներբողները Գրիգոր Նարեկացու ժառանգության մեջ ունեն բացառիկ արժեք, բայց ինչպես հարկն է չեն ուսումնասիրվել: Եվ եթե Գ. Մադոյանն իրավացիորեն ասում է, որ Աստվածածնին նվիրված ներբողը «համեմատաբար քիչ է արժանացել ուշադրության»¹, ապա կարող են ավելացնել, որ «Ի մեծ և յերջանիկ հայրապետն ի սուրբն Յակոբ եպիսկոպոս և վերադիտող սկզբնատիպ երկնահանգէտ աթոռոյ Մծբին քաղաքի»^{*} ներբողը ընդհանրապես դուրս է մնացել նարեկացիագետների ուշադրությունից՝ չհաշված առանձին հեղինակների կողմից տարբեր առիթներով արված հարևանի դիտողությունները: Այդ է պատճառը, որ դրա ստեղծման ժամանակի ու գրական-գեղարվեստական արժանիքների մասին երբեմն արվել են չիմնավորված ենթադրություններ, տրվել ոչ ճիշտ գնահատականներ: Օրինակ, Մ. Մկրյանը, այս, ինչպես նաև Առաքելոց ներբողի գրության ժամանակը համարելով անհայտ, գտել է, որ «դրանք գրված են սառը ակադեմիզմով և... աչքի չեն ընկնում հուզական հագեցվածությամբ»²: Նարեկացիագետ Պ. Խաչատրյանը, այս գնահատականը համարելով «բավական խստացված», միաժամանակ եզրակացրել է, որ այն «երևի ճիշտ է միայն Հակոբ Մծբնա հայրապետին ընծայված գովեստի համար»³: Ավելին, փորձելով պարզել խնդրո առարկա ներբողի ստեղծման ժամանակը՝ Պ. Խաչատրյանը գրել է. «Մծբնի Հակոբ եպիսկոպոսի մասին ներբողի գեթ մոտավոր ժամանակը որոշելու համար Նարեկացին, դժբախտաբար, չի թողել որևէ վկայություն, բայց հաշվի առնելով նրա նվազ հաջողվածությունը մյուս ներբողներից, գրական ժանրի սահմանում բանաստեղծի տաղանդի ու կարողությունների պակաս լիարժեք դրսևորումը, սխալ չի լինի կարծել, որ այն ներբողի տեսակում գուցեև Նարեկացու առաջին փորձերից է, մյուսներից ավելի վաղ գրված»⁴: Փաստորեն բանաստեղծը, թեկուզև անվստահորեն, Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողը համարում է տվյալ ժանրում Նարեկացու առաջին փորձերից և ըստ այդմ՝ մյուսներից ավելի վաղ գրված:

Իրավացի է նարեկացիագետը, որ բանաստեղծը «չի թողել որևէ վկայություն» մեզ հետաքրքրող ներբողի գրության ժամանակը որոշելու համար, բայց դա չի նշանակում, թե ընդհանրապես ոչ մի հնարավորություն չունենք դա անելու: Բարեբախտաբար կան հեղինակի մյուս ստեղծագործությունները և ամենից առաջ Մատյանը, որոնց հետ համեմատելու ճանապարհով կարող ենք գրեթե անսխալ լուծել առաջադրված խնդիրը:

¹ Գրիգոր Նարեկացի, Ներբողյան Սուրբ Աստվածածնին: Աշխարհաբարի վերածեց Գևորգ Մադոյանը, Եր., 2004, էջ 9:

^{*} Այսուհետ՝ Մծբն:

² Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Եր., 1955, էջ 138:

³ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 86:

⁴ Նույն տեղում, էջ 87:

Նախ ասենք, որ այդ կապակցությամբ շատ հետաքրքիր դիտողություն ունի Մ. Մկրյանը, որը թեև Առաքելոց և Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբող-ները, ինչպես տեսանք, համարել է «սառը ակադեմիզմով» գրված, այդուհանդերձ եզրակացրել է. «Այս ներբողներում թեպետ բանաստեղծական ներքին բուռն ոգևորություն չի զգացվում, բայց և այնպես խոհերը դարձյալ արտահայտվում են անկաշկանդ ու սահուն և այնպիսի ձևերով, որոնք, կարծես թե, բանաստեղծի նախապատրաստական վարժությունները լինեն՝ իր գլուխ գործոցը գրելուց առաջ»⁵ (ընդգծ. իմն է - Հ. Մ.): «Իշտ է, գրականագետն այս եզրակացությունը հաստատելու նպատակով բերում է որոշ փաստեր, սակայն, նախ՝ դրանք անբավարար են այդօրինակ կարևոր խնդիրը լուծելու համար, և երկրորդ՝ վերջում այնպես է գնահատում այդ ներբողների գրական-գեղարվեստական արժանիքը, որ ըստ էության ցրում է իր իսկ ասածի թողած տպավորությունը: Նա գրել է. «Բայց այս ներբողներում խոսքի ուժըն ու երաժշտականությունը, ինչպես Մանդակունու և այլոց ճատերում է նկատվում, ավելի արվեստական են ու ճիգով ստեղծված, քան թե անմիջապես բխում են զգացմունքների ուժից ու հոգեվիճակների դրամատիկականությունից»⁶:

Իրավամբ հարց է ծագում. ի՞նչն է պատճառը մնամ հակասական գնահատականների, այսինքն՝ ինչո՞ւ ոչ միայն տարբեր գիտնականների, այլև նույն գիտնականի տարբեր գնահատականների միջև առկա է որոշակի հակասություն: Հայտնի է, որ տրամաբանական հակասությունն արդյունք է իրականության հակասականության: Այստեղից հետևում է, որ առանց հասկանալու իրականության հակասականությունը, հազիվ թե հնարավոր լինի հասկանալ ու բացատրել ինչպես տարբեր հեղինակների, այնպես էլ նույն հեղինակի մտքերի միջև եղած հակասությունները: Իսկ իրականությունն այն է, որ Նարեկացու խնդրո առարկա ներբողը ոչ թե տվյալ ժանրում բանաստեղծի առաջին փորձերից է, այլ ըստ էության վերջինը, որտեղ իսկապես կատարել է յուրատեսակ նախապատրաստական աշխատանքներ «իր գլուխ գործոցը գրելուց առաջ», ինչպես նկատել է Մ. Մկրյանը: Թե ի՞նչ հիմքեր կան այսօրինակ եզրակացության համար, փորձենք ներկայացնել դրանք առանձին-առանձին:

1. Հայկազյան լեզվի բառգրքում միայն Նարեկացու ստեղծագործություններով վկայված բառերի մանրագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի կապ կա Մատյանի և բանաստեղծի մյուս գործերի միջև. որքան ժամանակի տեսակետից տվյալ ստեղծագործությունը մոտ է Մատյանին, այնքան շատ են դրանցում գործածված նորաստեղծ ընդհանուր բառերը⁷: Այդ տեսակետից շահեկանորեն առանձնանում են Առաքելոց և Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողները, որոնք նույնպիսի ընդհանրություն ունեն մակ իրար հետ: Ակնհայտ է մակ այդ ներբողների թե՛ թեմատիկ, թե՛ գաղափարական և թե՛ գրական-գեղարվեստական ընդհանրությունը: Դա նշանակում է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը ստեղծվել են մոտավորապես նույն ժամանակահատվածում և կրում են տվյալ շրջանում բանաստեղծի ունեցած բարոյահոգեբանական տրամադրության կնիքը: Իսկ դեռևս Գ. Ավետիքյանը նկատել է, որ Մատյանից առաջ բանաստեղծի կյանքում տեղի է ունեցել ստեղծագործական առժամանակյա դադար, որից նա դուրս է եկել, իր իսկ վկայությամբ, Առաքելոց ներբողով: Այստեղից հետևում է, որ Հակոբ Մծբնա

⁵ Մ. Մկրյան, նշվ. աշխ., էջ 138:

⁶ Նույն տեղում, էջ 139:

⁷ Այդ մասին մանրամասն տես Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու բառաշխարհը, «Բան-բեր Երևանի համալսարանի», 2005, թիվ 1:

հայրապետին նվիրված ներբողը Նարեկացին կարող էր ստեղծել Առաքելոց ներբողից հետո, բայց անպայման Մատյանից առաջ, իսկ թե ինչո՞ւ, կտեսնենք ստորև:

2. Բանաստեղծի ստեղծագործությունների լավագույն հրատարակություններում Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողն իբրև կանոն հաջորդում է Առաքելոց ներբողին: Թե որտեղից է գալիս կամ ինչպես է ստեղծվել այդ ավանդույթը, դժվար է որոշել, բայց ստույգ է, որ բանաստեղծի Ա և Բ վարքերում անհայտ վարքագիրները արդեն հետևում են այդ ավանդույթին կամ, գուցե, իրենք են սկիզբ դրել դրան: Իսկ ցանկացած ավանդույթ ստեղծվում է ինչ-որ հիմքի վրա:

3. Առաքելոց և Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողները, լինելով նույնաբնույթ, ունեն մի շարք համանման տեղիներ ու մտքեր, որոնք նույնպես վկայում են ժամանակագրական տեսակետից դրանց մոտիկության ու անմիջական կապվածության մասին: Թե՛ մեկի և թե՛ մյուսի սկզբում բանաստեղծը խոստովանում է, որ ձեռնարկել է շատ դժվար, եթե չասենք՝ անհնար գործ, որովհետև ցանկանում է փառքը հյուսել մահկանացու ծնված, բայց իրենց վարքով անմահների շարքը դասված սրբերի: Համեմատության համար զուգադրաբար բերենք այդ հատվածները (այստեղ և հետագա ընդգծումներն իմն են - Հ. Մ.):

Առաքելոց

Մծբն

Եւ եթէ ոչ հրաշալի գրեսցի լսողաց, մերկացի բաց ի բաց երևեսցի **ծածուկ ծոցոյ բանիս**, անեղծականս ճառել զստեղծեալսդ ժամանակաւ, և գրեալս շնորհօք որդիք էութեանն. և թէպէտ և ոչ անժամանակք ըստ անսահմանին, այլ սկիզբն գոյից յաիտեանց, իբր հիմն ժամանակաց սկսեալք, ընտրեալք մախ քան զեղանիլ էից աշխարհի, ըստ բարբառոյ ձայնին Պատղոսի*:

Եւ քանզի ամներձ է բանիս ձգումն առ անհասութիւն **ծածուկ խորհրդոյս**, որքան քանակութիւն փոքուն առ ստուարին դիմակ, և անձկականն գիծ առ լայնականն ծիր, և մարմնայինն յօդ առ տիրականն զոյ, և ձեռինն հասումն առ մտացն արագումն, և երկրակոխ հիւքաւոր առ սէրափին սրբաբան, և մահացու լուծական առ վերնական կենսածին*:

Գրեթե նույնն ենք տեսնում մաև մեկի և մյուսի վերջնամասում. թե՛ տասներկու առաքյալներին ու յոթանասուներկու աշակերտներին և թե՛ Հակոբ Մծբնա եպիսկոպոսին բանաստեղծը համարում է իր իղեալ և ուսուցիչ՝ հուսալով, որ նրանց միջոցով ինքը նույնպես կմիանա Աստծուն, կարժանանա կենաց պարգևին: Ահա այդ հատվածները.

Առաքելոց

Մծբն

Սոքա մեր մախնիք,
Սոքա մեր ծնողք ըստ աազանին,
Սոքա դաստիարակք մերս իմաստից,
Սոքա վարդապետք աշակերտելոցս,
Սոքա դաւանութեան բարեաց
ուսուցիչք,
Սոքա եկեղեցոյ սրբոյ հիմնադիրք,

Այս մահատակ յաղթող՝ այսր հանդիսի,
Այս սպառազէն արի՛ այսմ ճակատու,
Այս մարտիկ բարեփառ՝ այսմ
ասպարիսի,
Այս վկայ ճշմարիտ՝ այսմ պարգևի,
Այս աթոռակալ խնկելի՛ այսմ
վեհագունի,

* «Սրբոյ Խորն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 424: Այսուհետև այս հրատարակությունից իդումներ կատարելիս տողատակին ճշելու ենք միայն Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք և էջը:

* Նույն տեղում, էջ 439:

Սոքա կցորդակիցք արդարութեան
պաշտամանս,
Սոքա խրախոսյք ընտրական
կրօնիցս,
Սոքա ձեռնադրողք
քահանայութեանս,
Ի քրիստոսէ ընկալեալք և մեզ
մասնատրեալք,
Հաւատարիմ ուխտի դաշնաւորք,
Վկայք վեհագոյնք
աստուածատունկս կարգի:
Ի ձեռն սոցա ընդունական և
հաճոյական
Մաղթանաց հայցման աղօթից՝
Ընկալցուք և մեք մասն փրկութեան
Ի բարերար գթութեանց խնամոցն
Աստուծոյ,
Ջօրանալ ձեռին մեր ի շնորհս,
Ի բժշկութիւնս, ի բաշխումն կենաց
պարգևաց¹⁰:

Այս պետ պանծալի՝ այսր աստիճանի,
Այս դատատոր դրուատեալ այնմիկ
ատենի,
Այս պսակաւոր պայծառ՝ այնր
հրապարակի,
Այս որդի պերճալի՝ այնր քաղաքի,
Այս ժառանգ պճնեցեալ՝ այնմ
Երուսաղէմի,
Այս կամարար օրհնեալ հօրն
Քրիստոսի:
Ջսա յիշատակեցաք, զսոյն
բարձարցուցաք,
Սովիմք աղօթեցաք, կաճառ կացուցաք,
Պարս խմբեցաք, լապտերս լուցաք,
Եղս անուշութեան մատուցաք,
Կանթեղս աստեղօրէնս վառեցաք,
Հուր խորհրդական ընդ խունկ
խառնեցաք,
Սովիմք լուսատրեցաք, սովաւ
բժշկեցաք,
Սովիմ ել մահու ընկալաք¹¹:

5. Նկարագրելով առաքյալների և Հակոբ Մծբնա հայրապետի կատարած գործերը՝ հաճախ գործածում է նույն բառերն ու արտահայտությունները: Օրինակ՝

Առաքելոց

... անճառելի հրաշագործութեամբ զախտս մահացուս ի մարդկանէ հալածեցին, **զտեսանելիս խաւարեալ աչաց՝ կրկին յաւելմամբ լուսաւորեցին**, զլուծեալ անդամս ախտացեալ մարմնոց՝ յառողջութիւն կենաց կանգնեցին, **զմեռեալս յարուցին ի կեանս վերստին և յանտարակոյս փրկութիւն**, զդևս աներևոյթս չարին զօրաց հողմով բարկութեամբ կամացն աստուծոյ ի սպառ հալածեցին, զելս ընթացից երկնային մտիցն բնակութեան՝ հողածնաց բացին, զահեակն հեթանոսաց՝ աջ ձեռնադրեցին, զհրէական ձեռնարձակութիւնն իշխանական բանի կապեցին, զփայլումն երեսաց զեղագարդութեան մովսիսեան կերպին՝ ստուերին տեսակաւ ցուցին, զսրտմտութիւն սոսկալի սաստից բարկութեանն յարարածոց երկրի տրոհեցին¹²:

Մծբն

Հոգիս դարձոյց անդրէն ի մարմնի, յաջողուածս արար զօրութեան, **մեռեալս կանգնեաց և կենդանացոյց**. զոմն մահացոյց, և դարձեալ կեցոյց, զՎիմին մեծի կատարեաց զհրաշս, **աչաց ընծայեաց վերստին լոյս**, ատուրս համառօտեալս յերկարածգեաց, զյաճախութեան անաց զգնացս փակեաց, նշանս զործեաց մեծապէս, զգոյնս հերաց նոր յեղանակեաց, ծերութիւն ի տղայութեան կանխեցոյց, **տգեղացոյց զմուկեալ պատկերս, ամօթով ծածկեաց քան թէ վերարկուաւ**, զհասակ օրիորդաց եցոյց պառաւունս¹³:

¹⁰ Նույն տեղում, էջ 438: Այս և մյուս տողատումները կատարված են զուտ տեխնիկական՝ զուգադրման նպատակով, ուստի չեն հավակնում ստուգութեան:

¹¹ Նույն տեղում, էջ 453-454:

¹² Նույն տեղում, էջ 437-438:

¹³ Նույն տեղում, էջ 445:

6. Կամ թե՛ ազգակցական կապ տեսնելով Հակոբ Մծբնա հայրապետի և Գրիգոր Լուսավորչի միջև՝ նրանց բնութագրում է ճիշտ նույն ձևով, ինչպես առաքյալներին: Ահա մեկական հատված.

Առաքելոց

Քառակի երիւք գովութեամբ բարեաց
բաղդատեալք,
Չորեքծագեան մասանց էակաց
անպատկառ խօսնակք,
Միաբան բնութեան եղակաց սիրոյ
ջատագովք,
Ընորհագարդ բանի տուողին հոգեշունչ
աւետարանիչք,
Ամուք ուղղածիգք և հանդարտաբայք,
Չուարակք եզանց բանականք և
նուիրելիք,
Լծակիցք կրօնիւք համահետք և
խոհեմընթացք,
Ի գործի ձևակի խաչի խորհրդոյ՝
Չմարդկային սրտից անդաստանս
հերկագործողք,
Աազանին փրկագործութեան ունողք,
Եւ ի պարանոց ազդերի ձերում
ամբարձողք¹⁴:

Մծբն

Ամուք կենաց հաւատոց,
Ակօսատարք, **խոհեմք**
ի նաւահանգիստն վերին.
Երկիր լուսաւորք երկակի երկնի,
Երկուորիք ըստ առակողին և
ոչ անորդիք,
Կրկին բարեաց տուրք
ըստ մարգարէին,
Երկու ընդ միոյ՝ բարձրելոյն քարոզք,
Երկու պետական գլխատրութիւնք
վեհից,
Ոմն սկզբան և ոմն լրումն կենաց.
Եկեղեցոյ շինուածոյ երկու
տեսանելիք,
Երկակի ունկանց լսողաց՝ երկու
օրէնսդիրք
Փառաց տէրութեանն յաջմէ և յահեկէ:
Ի գազանային բարոյից նոխազք
նուիրելիք
Յանասնական կենդանեաց՝ ոչխարք
պատարագելիք¹⁵:

Առայժմ խոսք եղավ միայն այս ներբողների գրական-գեղարվեստական, բովանդակային ու զաղափարական ընդհանրությունների մասին, որոնք, ինչ խոսք, դեռ բավարար չեն առաջադրված խնդիրը լուծելու համար: Ուստի բերենք նաև լեզվական մի կարևոր փաստ, որը, կարծում եմ, լիովին հիմք է տալիս պնդելու, որ այս ներբողն ստեղծվել է Առաքելոց ներբողից հետո, բայց Մատյանից առաջ: Բանն այն է, որ նկարագրելով Մծբնա հայրապետի կատարած գործերը՝ ի թիվս այդ ամենի՝ ասում է նաև. «Եւ առաքելօրէն պահպանմամբ գլխայթոց բանսարկուին կոխեաց, և զանձն ընդ փայտ խաչին Յիսուսի՝ տենչանօք կախեաց»¹⁶: Փաստորեն Հակոբ Մծբնա եպիսկոպոսի գործելակերպն ընդդեմ եկեղեցու բանսարկուների բանաստեղծը նմանեցնում է առաքյալների գործունեությանը և հենց այդ նպատակով էլ ստեղծել է առաքելօրէն բառը, որը Հայկազյան բառգրքում վկայված է միայն վերը բերված նախադասությամբ: Այսինքն՝ առաքյալների գործելակերպը նրանց նվիրված իր ներբողով արդեն հայտնի էր, ուստի Մծբնացու դեպքում նրանց մասին իր ասածը չկրկնելու համար պարզապես գործածել է առաքելօրէն բառը: Իսկ թե ինչպես էին առաքյալները պայքարում չար բանսարկուի, այսինքն՝ աղանդների դեմ, որոշակի ասված է Առաքելոց ներբողում, որտեղ հիմք ընդունելով յոթանասուներկու աշակերտների վերադարձից հետո Տիրոջ ասած հանրահայտ միտքը (Ղուկ., Ժ, 19) բանաստեղծը գրել է. «Եւ այսպէս գուշակեալ գիր ստուերական ճշմարտաբար արդիւնագրեցին.

¹⁴ Նույն տեղում, էջ 427:

¹⁵ Նույն տեղում, էջ 449:

¹⁶ Նույն տեղում, էջ 452:

և կոխեցին մանրեցին գատամունս օձից խիստ հերձուածողաց և թունից կարճաց նոցին գործակցաց, ընդ զօրացելովն ի չարին մահու և Բելիարայ»¹⁷: Քանի որ առաքյալները, ըստ բանաստեղծի, եկեղեցու թշնամիներին տրորել, կոխկրտել են ու փշրել նրանց օձային ատամները, ուստի նույն ձևով է վարվել նաև Հակոբ Մծբնա հայրապետը՝ «զխայթոց բանսարկուին կոխեաց»: Ահա այստեղից էլ բանաստեղծն ստեղծել է **առաքելօրէն** բառը: Ընդ որում, եթե առաքյալների գործելակերպը նկարագրելիս իր միտքն սկսում է «**Եւ այսպէս**» բառերով, ապա Մծբնա հայրապետի գործունեության նկարագրությունն սկսում է «**Եւ առաքելօրէն**» բառակապակցությամբ: Դա նշանակում է, որ առաքյալներն առաջինը «կոխեցին մանրեցին գատամունս օձից խիստ հերձուածողաց և թունից կարճաց նոցին գործակցաց», իսկ հետո՝ նրանց հետևելով ու նրանց նման, այսինքն՝ առաքելօրէն, Հակոբ Մծբնա հայրապետը «զխայթոց բանսարկուին կոխեաց»: Դիտելի է, որ, ըստ Հայկազյան լեզվի բառգրքի, **առաքելօրէն** բառը հոմանիշ է առաքելաբար բառի, որը Նարեկացուց առաջ գործածել են շատերը, այդ թվում՝ և իր հայր Խոսրով Անձևացին, բայց բանաստեղծը, չցանկանալով գնալ տրորված ճանապարհով, ստեղծել է նոր հոմանիշ՝ **առաքելօրէն**: Ուշագրավ է նաև, որ, համաձայն նույն բառգրքի, առաքյալ բառից Նարեկացին ստեղծել է նաև **առաքելագէտ** և **առաքելախումբ** բառերը, իսկ նրա ուսուցիչ Անանիա Նարեկացին՝ **առաքելաբուղխ** բառը: Թվում է՝ այսբանը բավական է համոզվելու, որ Նարեկացին Հակոբ Մծբնա հայրապետին մվիրված ներբողը գրել է իսկապես Առաքելոց ներբողից հետո՝ զարգացնելով նրանում առաջադրված ինչ-ինչ գաղափարներ ու գրական - գեղարվեստական հնարներ:

Եթե այսպիսին է այդ երկու ներբողի հարաբերակցությունը, ապա իրավամբ ծագում է մեկ ուրիշ հարց. ինչպիսին է խնդրո առարկա ներբողի հարաբերակցությունը Մատյանի հետ, արդյոք կա՞ նրանց միջև որոշակի կապ ու ընդհանրություն: Նախ ասենք, որ Մատյանը՝ որպես բանաստեղծի անցած ուղու, նրա գրական-գեղարվեստական գործունեության հանրագումար, վերառված ձևով պարունակում է հեղինակի նախորդ բազմաթիվ գործերից շատ գաղափարներ, ստեղծագործական հնարներ, լեզվական և հատկապես բառամթերային հարուստ նյութ: Ինչ վերաբերում է խնդրո առարկա ներբողին, ապա այն, ստեղծված լինելով Մատյանից անմիջապես առաջ, գրեթե ամբողջությամբ, բայց իհարկե էապես վերափոխված ձևով, ներառված է Մատյանի մեջ: Մանրագին համեմատությունից պարզվում է, որ բանաստեղծը նրանում գտել, կիրառել է գրական-գեղարվեստական բազում հնարներ, որոնք, լինելով յուրատեսակ նախափորձ, Մատյանում ստացել են լայն ծավալում՝ հասցվելով բացառիկ կատարելության: Ի հաստատումն ասվածի՝ բերենք մի քանի օրինակ:

1. Նարեկացիագիտական գրականության մեջ վաղուց արմատավորված է այն տեսակետը, որ «ձայերենի ամենաերաժշտական» ոտանավորի երեք հիմնական տեսակները՝ «երկանդամ, ... եռանդամ... և քառանդամ», «առաջին անգամ հանդիպում են Նարեկացու մոտ»¹⁸: Հայտնի է նաև, որ Մատյանը, ստեղծված լինելով հիմնականում անհանգ, առանձին դեպքերում բանաստեղծը դիմել է հանգավոր չափածոյին՝ առավելագույնս ուժեղացնելու համար բանաստեղծական խոսքի ներգործությունը: Այդ տեսակետից առանձնապես աչքի է ընկնում Մատյանի ԻՉ գլուխը, որի 64 տողը (21-84) հանգավորված է ի ձայնավորով: «Դա,- ըստ

¹⁷ Նույն տեղում, էջ 429:

¹⁸ Մ. Մկրյան, նշվ. աշխ., էջ 233-234:

Պ. Խաչատրյանի,- Մատյանի ամենաերաժշտական ու ռիթմիկ հատվածներից մեկն է»¹⁹: Պարզվում է, որ հանգավոր ոտանավորին Նարեկացին հաճախ է դիմել, իսկ ինչ վերաբերում է *ի* ձայնավորով հանգին, ապա դրանով ստեղծված մեկ հատված արդեն առկա է Ապարանից խաչի պատմության մեջ, իսկ մի քանի հատված՝ այս ներբողում: Դրանցից մեկն արդեն բերեցինք վերը, բայց, կարծում եմ, զեղարվեստական տեսակետից ավելի հաջողված է երկրորդը.

Լոյսն ծագեալ ի ստորին երկրի,
Ակն արևու ի մէջ աշխարհի,
Անձնահամայն իսկապէս ի հողեղինի,
Միջնորդ կենդանի դատողին բանի,
Ծիր միանջման վշտաց տագնապի,
Սահման կենաց յընթացս ախտի,
Ահարոն երկրորդ՝ նորս Իսրայէլի.
Ապաքինիչ մահու ի խունկ բուրաստանի,
Նշանակ կենաց ի մահու սաստի,
Յանկ շնչական սատակման վճռի,
Բժշկապետ մարմնոց յօղեալ ընդ հոգի,
Հրաշացեալ զեղով ի դէմս կերպի,
Չօրութիւն ազդման ի տուր հագագի,
Նշոյլ փրկութեան շնորհացն Յիսուսի:
Արդ այսքանեօք նուագօք ի զանազանակ մասունս բանի
Յաւտ պսակեալ, երջանիկդ ի գումարս զնդի
Հայրապետական մեծարեալ դասուն,
Ընտրեալ տէր սուրբ Յակովբ²⁰:

2. Երբեմն Մծբնա հայրապետին մվիրված ներբողի այս կամ այն հնարը Մատյանում գործածված է մեկից ավելի անգամ: Օրինակ՝

Մծբն

Եթէ օրհնեաց՝ լցաւ,
Եթէ անէժ՝ արձանացաւ,
Եթէ գուշակեաց՝ կատարեցաւ,
Եթէ մաղթեաց՝ խնկեցաւ,
Եթէ նուիրեաց՝ ճննճերեցաւ,
Եթէ բանս եղ՝ կառուցաւ²¹:

Մապրյան (Իէ, տ. 114-118)

Եթէ լուիցես՝ հառաչեմ,
Եթէ ունկն մատուցանիցես՝ պաղատիմ,
Եթէ անսայցես՝ աղերսեմ,
Եթէ ներեսցես՝ աղաչեմ,
Եթէ առ իս դառնայցես՝ գոչեմ,

Մապրյան (ԾԱ, տ. 29-37)

Եթէ մեղանչեմք՝ ողբաս,
Եթէ արդարանամք՝ ժպտիս,
Եթէ ատարանամք՝ սգաս,
Եթէ մերձենամք՝ տաւնես,
Եթէ տամք՝ ընդունիս,
Եթէ յամրանամք՝ երկայնամտես,
Եթէ մեր ժխտեմք՝ դու առատապէս
շնորհեալ ընձեռես,
Եթէ լքանիմք՝ տրտմիս,
Եթէ արիանամք՝ խնդաս:

¹⁹ Գրիգոր Նարեկացի, Մատենանոց օրհրագութեան, աշխատասիրությանը Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, 1017: Այսուհետև միայն՝ Գրիգոր Նարեկացի, Մատենանոց օրհրագութեան և էջը:

²⁰ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 442:

²¹ Նույն տեղում, էջ 445:

Կամ

Մծրն

Ոչ վայրապար ընթացք,
 Ոչ անկայուն միտք,
 Ոչ վրիպակ հետք,
 Ոչ սասանեալ սիրտք,
 Ոչ անխրատ երիկամունք,
 Ոչ շիջեալ իղձք,
Այլ ամենագոյ արգասիւ Եղեալ
Շահաւետութեամբ
 աստուածականաւ՝
 Հովիւս այս բարի²²:

Մաքյան (ՀԴ, տ. 94, 97, 101-102)

Ո՛չ քթել մի ական,

 Ո՛չ կիսամասնեայ յամրութիւն,

 Ո՛չ նշողից արագութիւն,
 Ո՛չ շնչոյ տուրետառութիւն,
Մաքյան (ՀՁ, տ. 20-29)
 Ոչ լսես անձս, ոչ այխործես չար,
 Ոչ կամիս կորուստ, ոչ ըղձանաս մահ,
 Ոչ յուզիս ի խռովութենէ,
 Ոչ տիրիս ի ցասմանէ,
 Ոչ հարկիս ի բարկութենէ,
 Ոչ մթանաս ի սիրոյ,
 Ոչ այլայլիս ի գթութենէ,
 Ոչ փոփոխիս ի բարութենէ,
 Ո՛չ թիկանց շրջումն եւ ո՛չ երեսաց
 անդրադարձութիւն,
Այլ ամենեւին լուսատրութիւն եւ
 նկատումն փրկութեան:

Կարծում եմ՝ դժվար չէ հասկանալ, որ բերված հատվածների հիմնական տարբերությունը բայի գործածության ժամանակի և դեմքի մեջ է միայն. բնականաբար, Հակոբ Մծրնա հայրապետի մասին ներբողում է անցյալ ժամանակի երրորդ դեմքով, իսկ Աստծո հետ երկխոսում է ներկա ժամանակի առաջին և երկրորդ դեմքով:

3. Ինչպես գիտենք, Մատյանում քանաստեղծն ընդհանրապես մարդկային կյանքը, բայց առավել ևս իր կյանքը, քանիցս համեմատում է ծփացող ծովի հետ (տե՛ս Բանք ԻԵ, ԾԴ, ՀԱ ևն) և իր մասին այլաբանորեն հայտնում անչափ հետաքրքիր տեղեկություններ²³: Ճիշտ է, Հակոբ Մծրնա հայրապետին նվիրված

²² Նույն տեղում, էջ 448:

²³ Այդ մասին տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու առեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1: Ի դեպ, իրավացի է Ս. Ս. Ավե; յնցևը, որ «կյանքի ծովի» փոխաբերությունը գալիս է հունական ճարտասանությունից և ունի պայմանական բնույթ, բայց չենք կարող համաձայնել նրա այն պնդման հետ, որ իբր Նարեկացու պարագային դա «չունի ոչ մի մասնավոր հատկանիշ», և «որ մնան մասնավորությունը սկզբունքորեն հակացուցված է ներքին հղացման բերումով» (Ս. Ս. Ավերինցև, Նախշի և սրտի խորության պերճանքը, Գրիգոր Նարեկացու քերթությունը, «Գրիգոր Նարեկացի. խոսվածքներ Բախի խորալների պես» գրքում, Եր., 1999, էջ 140, նույնը տե՛ս նաև **Григор Наррекаци**, Книга скорбных песнопений. Перевод с древнеармянского и комментарий М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян. Вступительная статья С. С. Аверинцева, М., 1988, էջ 18; «Читая Наррекаци». Предисловие и составление Левона Мкртчяна, Ер., 1997, էջ 137): Նարեկացու համճարի բացառիկության գծերից մեկն էլ հենց այն է, որ կարողացել է նույնիսկ հանրահայտ պայմանականություններն ու խորհրդանիշներն այնպես օգտագործել, որ մի կողմից ներկայացնում է անհատական կենսագրական երևույթներ, իսկ մյուս կողմից դրանք ընկալվում են անհատական նշաններից լրիվ ձեռքազատված՝ ստանալով համամարդկային հնչեղություն: Ուստի միանգամայն իրավացի է նարեկացիագիտության երախտավոր Լևոն Մկրտչյանի այն տեսակետը, որ ինչպես

ներբողը գրական-գեղարվեստական տեսակետից համարվում է պակաս հաջողված ստեղծագործություն, բայց և այնպես նրանում կան նաև գեղարվեստական կատարյալ պատկերներ, որոնցում փայլատակել է Նարեկացու բանաստեղծական հանճարը: Այդ տեսակետից առանձնանում է ծքվի և հասարակական կյանքի նարեկացիական համեմատությունը: Բանաստեղծն աշխարհը նմանեցնում է ծփացող ծովի՝ ցուցադրելով մեկում և մյուսում տեղի ունեցող համանման երևույթները՝ հակադիր ուժերի բախում, կռիվ ու պատերազմ, պարտություն ու հաղթանակ, նաև՝ ուժեղների կողմից թուլյերի բռնադատություն ու կլանում, և այլն, և այլն: Բերենք այդ հատվածն ամբողջությամբ. «Քանզի յիշատակեալ զլաստն ապրացու Նոյեանն փայտի, յորում կեցին նուազք յանբաւից, և իսկոյն ի դէմս առեալ զխորհուրդն՝ իմաստապէս տպաւորեցոյց, զաշխարհի իւրայովքս պատկեր ծովու ծփեալ ի բազմաց, ոչ լուծական ալեօք կոծեցեալ, այլ ի զանազան պատահմանց շարժեալ, ախտի զայրացեալ, մեղօք պղտորեալ, յեղանակօք այլալեալ, և ընդդիմակայ ներհակօք զիրեարս բախեալ: Ոմն յաղթէ, և ոմն պարտի, փախնու արշաւէ յանապաւէնն սահման, և անդէն մհանջի: Իբր գումար կենդանի գորաց՝ միմեանց պատահին, և անդէն ցրին, քակտին, լուծանին: Իբրև ազինք զանազան ազգաց ի գուր խոռվելոց յերկրէ կորուսեալ, անշնչապէս բարբառին, անձայն աղաղակեն, անխորհրդաբար խիզախեն. **կեան և ոչ երևին, զոն և ոչ էանան, են և ոչ ճանաչին, մնան և ոչ տեսանին:** Չփոփոխումն էիցս առակեն, զխաղացումն ժամանակացս յայտնեն, զսասանումն աւուրց նկարեն, զանցաւորացս բարձումն զրեն: Են ի ծովու դուղակք ահագինք՝ զլխաւորին սաստկութեամբ դևաթանն նուանեալ կիտաւ. են և մանունք ընդ նովաւ տկարք, բազմացեալ օտարատեսակ այլազան զարմից. բանայ զկոկորդն ըմբոնողական, և ձգէ զնոսա իբր ի վիհ մահու, և են նորա նիւթ պորտոյն պարարման: **Են և յերկրի բունք բռնադատիչք փոքունց, որք զօրեն սոցին,** իբր նա նոցին. և են կերակուր ժանեացն ծախման՝ ձկունք որսորդաց, **իբր նոքին՝ կամաց զրպարտչաց»**²⁴:

Ճիշտ է, ծփացող ծով-աշխարհի պատկերը բանաստեղծը գործածում է նաև իր այլ ստեղծագործություններում, օրինակ՝ Առաքելոց ներբողում²⁵, բայց ոչ մեկում չունի այն խորքն ու պատկերավորությունը, առավել ևս՝ սոցիալական հագեցվածությունը, ինչ չակոր Մծբնա հայրապետին նվիրված ներբողում է: Այդ է պատճառը, որ բանաստեղծը հենց այս ստեղծագործության գրական-գեղարվեստական հնարները, այդ թվում և վերը բերված հատվածի առանձին գաղափարներ ու պատկերներ ուղղակիորեն ներմուծել է Մատյան: Այդ տեսակետից ամենախոսուն օրինակը հետևյալն է.

Մծբն

Կեան և ոչ երևին,
Գոն և ոչ էանան,
Են և ոչ ճանաչին,
Մնան և ոչ տեսանին:

Մապրյան (ԾԿ, տ. 61-67)

Այսու առկաւ եւ ես՝ եղկեկիս.
Խաւսին՝ եւ ոչ իմանամ,
Գոչեն՝ եւ ոչ ինչ լսեմ,
Բարբառին՝ եւ ոչ զարթնանամ,
Հնչեն՝ եւ ոչ փոխադրիմ,
Փողեն՝ եւ ոչ գումարիմ,
Վիրատրիմ՝ եւ ոչ ևս զգամ...

ամեն մի իսկական բանաստեղծ, այնպես էլ Գրիգոր Նարեկացին չէր կարող բավարարվել գուտ սիմվոլների գործածությամբ, այլ իբրև կանոն, իր «եսից» է գնում դեպի բոլորը, բայց և ուրիշների միջոցով, բոլորի միջոցով գալիս է իրեն, դեպի իր «եսը» (տես Մ. **Мкртчян, Видел ли Нарекаци море?, "Литературная Армения", 1986, № 4, էջ 98**):

²⁴ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 446:

²⁵ Այստեղ առաքյալներին անվանում է «վրիպեցելոց ի ծովային ծփանաց աշխարհի՝ աստեղապէս ուղղիչք և առաջնորդիչք» (նույն տեղում, էջ 426):

Համանման հատված կա նաև Մատյանի ԾԵ՞ գլխում (տ. 48-60).

Քանզի եւ որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ
Բարոք թուեցաւ շար ասել զմահ՝ առ չիմանալոյն պատճառի,
Եւ ես վկայեմ իմովս բանիւ.
Քանզի իբր զանզգայ պաճարս անասնոց՝
Մեռանիմք՝ եւ ոչ զարիտրիմք,
Կորնչիմք, եւ ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք, եւ ոչ խոնարհիմք,
Տարագրիմք, եւ ոչ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ոչ զղջանամք,
Մաշիմք, եւ ոչ մտառենք,
Պակասիմք, եւ ոչ պատրաստիմք,
Գնամք, եւ ոչ զգուշանամք,
Գերիմք, եւ ոչ ես զգամք:

Ծփացող ծով-աշխարհի վերը բերված նկարագրության մի հատված գտնում ենք նաև Մատյանի ՀԱ բանում (տ. 148-155).

Չոր եթէ ոք, իմաստութեամբ ի քնին առեալ,
Խուզեցէ զլուղակացն բազմատեսիլ զանազանութիւն՝
Զմանունս փոքունս ընդ մեծամեծացն դասեալ,
Որ առանց թուոյ եւ քանակութեան համարոյ
Թիմոս առեալ անբաւ երամոց՝
Եռան, զեռան, սլանան ի մարմինս ծովու, -
Վկայեցէ եւ հաստատեցէ ճշմարիտ լինել
Զասացելոցս բանագրութիւն:

Հարկավ կան այլ հատվածներ ևս, որոնք, կարծում են, կարիք չկա բերելու:

4. Հակոբ Սժբնա հայրապետին նվիրված ներբողում, հակադրվելով անտիկ աշխարհից եկող և միջմադարում տիրապետող մտայնությանը, Նարեկացին փորձում է մտածողության մեջ համատեղել անհամատեղելիները: Ըստ այդմ, հիմք ընդունելով Սժբնա հայրապետի և Գրիգոր Լուսավորչի կենսագրությունների ընդհանրությունները, նրանց մասին գրում է. «Ի՞ զազանային բարոյից՝ նոխազք նուիրելիք, յանասնական կենդանեաց՝ ոչխարք պատարագելիք, ի շարեաց հեթանոսականաց՝ աննուագ բարիք, ի խաւարասնունդ հարց մանկունք լուսոյ, փոխակերտեալք Զրիստոսի առ այլից յայլմէ, ի սպանողաց մարմնոց՝ կենդանապարզք հոգւոց: Եւ այսու սոքին ոչ սուն մի ստորագրին, քան եթէ մեծապանծ պարծանօք ի լոյս ներբողին»²⁶: Այնուհետև շարունակելով այդօրինակ համեմատությունների շարքը՝ բանաստեղծը եզրակացնում է. «Եւ արդ՝ վայելուչք ի տգեղաց, և ընկալուչք յանպիտաց, բարձունք ի խոնարհաց, և առաջիմք ի կրսերաց, ըղձալիք ի վատթարաց, և հրաշալիք ի յանարգաց, համակերտ օրինակութիւնք առ չքնաղ ընտրութիւն սրբոց՝ յարահիւսմամբ ճառիս բաղկացաւ:

Իսկ **զանհնարիցն հնարատրութիւն՝** յերգագրութիւն բանից շարագրել, զկոչողին փառս յաճախէ»²⁷: Բանաստեղծը Աստծու ամենագորությունը ցուցադրելու համար փորձել է համատեղել անհամատեղելիները կամ, ինչպես ինքն է ասում, «զանհնարիցն հնարատրութիւն»: Իրականում թե՛ վերը բերված հատվածում և թե՛

* Ըննական բնագրում սխալմամբ տպագրված է՝ ԾԵ:

²⁶ Նույն տեղում, էջ 449:

²⁷ Նույն տեղում, էջ 450:

չարունակության մեջ թվարկված օրինակներում գործ ունենք ոչ թե մարդկային մտածողության մեջ իրար փոխբացառող հասկացությունների միաժամանակյա գոյությունը հաստատող փաստերի, այլ բնության երևույթների բուն էությունը ցուցադրող իրողությունների հետ, որոնք, առերևույթ լինելով շատ զարմանալի, բնավ չեն հակասում ո՛չ բնությանը և ո՛չ էլ տրամաբանությանը:

Մատյանում արդեն, ասես զգալով իր նպատակի՝ «զանհնարիցն հնարաւորութիւն՝ յերգագրութիւն բանից շարագրել» և բերված օրինակների անհամապատասխանությունը, մի կողմից հղկում ու կատարելագործում է բնությունից վերցված փաստերը, իսկ մյուս կողմից թափանցում է տրամաբանական մտածողության ոլորտ՝ իրականացնելով անհամատեղելիների համատեղման իր ձգտումը: Դրանով իսկ հայ բանաստեղծը, առանց չափազանցության, դարերով առաջ է անցնում իր ժամանակի գիտական-տրամաբանական մտածողությունից, որը կտրականապես մերժում էր մարդկային բանականության մեջ փոխբացառող հասկացությունների միաժամանակյա գոյությունը: Ուստի երիցս իրավացի էր Էդուարդաս Մեծելայտիսը, երբ տասնամյակներ առաջ գրել է. «Նարեկացին համաշխարհային գրականության մեջ փիլիսոփայական ուղղության ամենահետաքրքիր բանաստեղծներից մեկն է և ամբողջական հետազոտության է արժանի: Ուզում եմ հավատալ, որ ժամանակակից գիտությունն այդ կկատարի: Եվ այն ժամանակ անցած դարերի մեծ ճգնափորը կկանգնի համաշխարհային պանծալի մտածողների շարքում»²⁸:

Բանաստեղծը Մատյանում (Բան ԼԱ, տ. 86-100) գրում է.

Յանդգնիմ ասել,

Թէ որ կարդայ զքեզ գովեստիս, ծանուցեալ զքեզ, թէ իցես,

Թէ եւ եւթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ

պատժատրութեամբ,—

Առ այս արինակ կիրթ ձեռնարկութեան,— զիա՞րդ ոչ քո իցէ:

Յորս է տեսանել ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ

երամս աղանեաց,

Ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս,

Ի թիս շանց գազանականաց՝ գառինս նուիրելիս,

Հեզութիւն՝ ի խստութեան, կատարելութիւն՝ ի թերութեան,

Խոնարհութիւն՝ յանբարհաւաճութեան, ճշմարտութիւն՝ ի ստութեան,

Միամտութիւն՝ ի մանկութեան, անբծութիւն՝ յայլամտութեան,

Բարարութիւն՝ ի չարութեան, պարկեշտութիւն՝ ի լկտութեան,

Ողորմութիւն՝ յանգթութեան, ապաշաւանք՝ յանյուսութեան,

Քաղցրութիւն՝ ի բարկութեան, հաշտութիւն՝ ի թշնամութեան,

Անոխութիւն՝ ի խաժանողութեան, քաջալերութիւն՝ ի վկութեան,

Արինութիւն՝ ի նետաձգութեան:

Կասկածից վեր է, որ այստեղ գործ ունենք Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողում բանաստեղծի ձեռնարկված քայլի՝ «զանհնարիցն հնարաւորութիւն՝ յերգագրութիւն բանից շարագրել», հղկված ու մշակված տարբերակի հետ: Այդ է հաստատում թեկուզև այն փաստը, որ բնական երևույթներից այնտեղ բերված օրինակներից երկուսը կրկնվում են, բայց ոչ թե նույնությամբ, այլ էապես փոխված: Օրինակ, Ներբողում կարդում ենք. «Ի գազանային բարոյից՝ նոխազք

²⁸ Էդուարդաս Մեծելայտիս, Տազնապալի՝ ինչպես Բախի խորալը, «Գրիգոր Նարեկացի. խոտվահույճ՝ Բախի խորալների պես» գրքում: Կազմեց և առաջաբանը գրեց Լևոն Սկրտչյանը, ռուսերենից թարգմանեց Արշակ Մադոյանը, Եր., 1999, էջ 16:

նուիրելիք», որը Մատյանում դարձել է՝ «ի թիս շանց գազանականաց՝ գառինս նուիրելիս»: Ինչպես տեսնում ենք, առաջին դեպքում հակադրությունը շատ անորոշ է, ուստի Մատյանում այդ հակադրությունը որոշակիացրել և ուժեղացրել է «ի գազանային բարոյից»-ի փոխարեն գրելով «ի թիս շանց գազանականաց», իսկ «նոխազք նուիրելիք»-ի փոխարեն՝ «գառինս նուիրելիս»: Պարզ է, որ շունն ու գառը ավելի սաստիկ հակադրություն են ցույց տալիս, քան բարոյիցը և նոխազք: Ավելի հետաքրքիր է երկրորդ օրինակը: Ներբողում, որպես մեծի նկատմամբ փոքրի հարաբերության ցուցադրում, գրում է՝ «ի թորմանէ բոսորակայակ կաթուածոց քառտտանեաց անմաքրից՝ ներկուածք կայսերական հանդերձից»: Միտք բանին այն է, որ քառտտանի անմաքուր կենդանիների բոսորակայակ քրտինքի թորվածքից ստացվում է կայսերական հանդերձանքի ներկվածք: Նախ՝ այստեղ ոչ մի անհամատեղելի համատեղություն չկա, և երկրորդ՝ չի հասկացվում, թե որ չորքտտանի անմաքուր կենդանու մասին է խոսքը: Մատյանում արդեն բանաստեղծն այս ամբողջ արտահայտությունից պահել է միայն **անմաքրից** բառը, որը եթե այնտեղ առանձնապես չէր հնչում, ապա այստեղ ձեռք է բերել բացառիկ կարևորություն, որովհետև ասելով «ի մէջ խորխտականաց **ձիոց անմաքրից**՝ որոջս հանդարտաբարս»՝ դրանով իսկ ցուցադրել է անմաքուրի և մաքուրի, այսինքն՝ չորքտանցողի և որոճացողի հակադրության համատեղելիությունը:

Ուշագրավ է, որ Մատյանում անհամեմատ պակասեցրել է բնության երևույթներից վերցված օրինակների թիվը, ընդհակառակը, շեշտը դրել տրամաբանական փաստերի վրա և կազմել անհամատեղելի հասկացությունների համատեղման 15 գույգ: Հնարավոր է, որ դրանք այսօր չթողնեն նույնպիսի տպավորություն, ինչ սրանից հազար տարի առաջ: Չէ՞ որ նախ՝ անցած հազար տարում մասամբ փոխվել են հասկացությունների իմաստները, երկրորդ՝ Կանտ-հեգելյան դիալեկտիկային ծանոթ մերօրյա մտածողության համար դրանք հնչում են ըստ էության որպես սովորական երևույթ: Այս դեպքում արդեն չափազանց կարևոր է պատմական մոտեցումը: Այսինքն՝ բանաստեղծի այդ քայլը պետք է գնահատել ոչ թե XXI դարակազմի, այլ X դարավերջի մտածողության համապատկերի վրա: Ասվածի լավագույն վկայություն կարելի է համարել «միամտութիւն՝ ի մանկութեան» գույգը, որը առաջին հայացքից տարակուսանք է առաջացնում. արդյո՞ք միամտությունն ու մանկությունը փոխբացառող հասկացություններ են: Բայց դա միայն առաջին հայացքից: Իրականում պարզվում է, որ բառս գրաբարում ունեցել է երկու իմաստ. այդ պատճառով էլ Հայկազյան լեզվի բառգրքում ներկայացված է երկու բառհոլովածով. 1 «Մանկութիւն. գ... Մանուկ գոլն. հասակ և վիճակ մանկան. տղայութիւն. պատանեկութիւն. առոյգ հասակ...»²⁹, 2 «Մանկութիւն. գ. Որպէս Մանկ գոլն. այսինքն խորամանկութիւն, մեքենայագործութիւն. և Մանկական ստահակութիւն...»³⁰: Ի դեպ՝ երկրորդ իմաստով որպես գործածության միակ աղբյուր վկայված է Նարեկացու հենց այս օրինակը, բայց Մատյանի ԼԱ բանի փոխարեն նշված է Ժա:

Ասենք նաև, որ վերը բերված հատվածը «թէ եւ եթամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաորութեամբ» տողը ժամանակին համարել ենք ծածկագրություն և վերծանել որպես 7x8=56, որով բանաստեղծը հայտնել է այս գլուխը գրելու ժամանակ իր տարիքը³¹: Ներկա դեպքում, չցանկանալով մանրամասն փաստարկել իմ այդ տեսակետը, կցանկանայի ասել միայն, որ նախ՝ տողս

²⁹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. երկրորդ, Եր., 1981, էջ 205-206:

³⁰ Նույն տեղում, էջ 206:

³¹ Տե՛ս Հ. Ղ. Միրզոյան, Նարեկի ծածկագրությունների վերծանության փորձ, «Բաներ Երևանի համալսարանի», 2002, թիվ 3, էջ 70-71:

ընդմիջարկություն* է, որին բանաստեղծը հաճախ է դիմում հատկապես ինքնակենսագրական տեղեկություններ հայտնելիս: Երկրորդ, այն՝ վարակեալ բառն այստեղ գործածված է բազմապատկելու իմաստով: Բանն այն է, որ Հայկազյան լեզվի բառգրքում վարակեմ կամ վարակիմ բայը, ի թիվս այլևայլ իմաստների, նշանակում է նաև շաղիլ, համակիլ (տե՛ս հ. երկրորդ, էջ 790), իսկ շաղել նշանակում է նաև զանգել, շաղախել, թաթաւել ևն (տե՛ս ն.տ., էջ 461): Վերջապես, համակիմ բայն արտահայտում է նաև՝ «համակ շուրջ պատիլ. բոլորովին ընկղմիլ... շաղիլ» (ն. տ., էջ 16) և այլ իմաստներ: Հասկանալի է, որ եթե իրերի ու առարկաների համար վարակեմ կամ վարակիմ բայը գործածվում է շաղախելու կամ շաղախվելու իմաստով, ապա թվերի համար դա կարող է նշանակել հենց բազմապատկում:

5. Անշուշտ կան բազմաթիվ այլ համեմատելի տեղիներ ևս, որոնք բոլորն այստեղ չենք կարող մեկ առ մեկ բերել, բայց կա մեկ փաստ, որն անհնար է անտեսել: Բանաստեղծը ներբողի վերջում հայտնում է այն գրելու նպատակը, դրա հետ կապած իր հույսը և ունեցած սպասելիքները: Պարզվում է, որ դրանք ըստ էության կրկնվում են նաև Մատյանում, բայց ավելի ցրիվ, այսինքն՝ Մատյանի տարբեր գլուխներում: Փորձենք զուգադրել դրանք (Մատյանից բերած հատվածները վերցված են քննական բնագրից, ուստի փակագծերի մեջ նշվում է Մատյանի համապատասխան գլխահամարը և տողը):

Մծրն

Որով և հայցենք ի քնն, բարերար տեր փառաց Յիսուս, **հորդ միայնոյ միածին որդի**, բարեգթացեալ հաճեսցիս **հայել ետոտոել յայս զոհ** պաշտաման մաղթանաց բանի. և հիմնեցուցես զայս քար գովեստի ի շինուած յարկի քումդ հանգստի դաւանարանի այս բարի հովուի, և փոխադրեսցես մեզ տուն բնակութեան՝ զլուսապաճոյճ զաւիթ տաճարիդ արքայականի: Զի սովիմք միշտ ի քեզ պատուաստեցայց, բւեռեալ յուսով հաւատոյ պնդմամբ, և գերակայ փորձութեանց գտեալ, անտարակոյս ճանապարհորդութեամբ անարատապէս առ քեզ հետեւել: Եւ հոգելից փորութեամբ օրհնեալ օժանդակեցես կատարելապէս զայս պատճէն տառի. զի որ ընթերցցի և վերծանիցի, հոգում քո լցցի, և բժշկեսցի ի պէսպէս ախտից կորստականաց անձին և մարմնոյ, բարեխօսութեամբ հայցման աղօթից սրբոյձ Յակովբայ: Որում կցորդեալ հաւասարեացուք մասամբ հաւատոյ ի փառաւորութիւն մեծիդ ժամանել. զերբորդական միութիւն Էիդ փառաւորեսցուք օրհնառաք ձայնիւ, զհայրդ երկնաւոր,

Մապրյան

Այլ **հոտոտեսցի՛ս, հայեսցի՛ս, գթած** (Ա, տ. 6),
Տո՛ւր հանգիստ...
Բարեխաւսութեամբ հայցուածոց Սրբոյ Աստուածածնիդ (ԺԲ, տ. 66-70),
Որով ամէնառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ (ԻԷ, տ. 149),
Վերստին գտեալ պնդեցայց՝ քաւեալ եւ ստեղծեալ կրկին Ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց (ԻԷ, տ. 151-152),
Թէ՞ զմարմնականաց ախտից սպանողաց (ԻԸ, տ. 15),
Ըստ մաղթանաց բանի հեծութեան սրտի Եզրի երջանկի (ԻԸ, տ. 60),
Արդ, բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ մատենի (ԻԸ, տ. 106),
Առ պատուաստումն կտրեցելոյս՝ կցորդութիւն քո (Լ, տ. 124),
Աստուծոյ միոյ միածին Ռրդի (ԼԷ, տ. 73),
Բժշկեա՛ ի հիւանդութեանցս ախտից, ողորմած (ԽԲ, տ. 22),
Առատածեռնեա՛ եւ արդէն ի քեզ իսկ պատուաստեցայց (ԽԲ, տ. 33),

* Ի դեպ, ընդմիջարկութիւն բառն ստեղծել է Նարեկացին և գործածել միայն Մատյանի ՂԳ բանում՝ «կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր ասանդեալ»:

և գորդիդ միածին, և զհամագոյ սուրբ հոգիդ: Որում փառք, պատիւ և գօրութիւն, այժմ և միշտ և յաիտեանս յափտենից ամէն²²:

...յաւել՛ զտկարս ի տունն **Դաթի եւ անդուստ փոխեալ ի տունդ աստուծոյ** (ՀԷ, տ. 21-22):

Եւ հոտոտեցիս յայս նուէր բանի անարիւն զոհի, քազատր երկնի (ՉԸ, տ. 10),

Եւ որ որ ընթերցցի զայս աղերս ծայնի (Ղ, տ. 132):

Բերված նյութի մանրագնին համեմատությունը թողնելով ընթերցողին՝ կցանկանայի ուշադրություն դարձնել հատկապես մի քանի փաստի վրա: 1. Ներբողում բանաստեղծն Աստծուց խնդրում է «հայել հոտոտել յայս զոհ պաշտաման մաղթանաց բանի», իսկ Մատյանում նախ փոխել է բայերի տեղերը, ապա «զայս զոհ պաշտաման բանի» փոխարեն գրել է «յայս նուէր բանի անարիւն զոհի» (ՉԸ, տ. 10): 2. «որ ընթերցցի և վերծանիցի, հոգով քո լցցի, և բժշկեցի ի պէսպէս ախտից կորստականաց անձին և մարմնոյ» միտքը Մատյանում արտահայտել է տարբեր գլուխներում՝ պահպանելով գրեթե բոլոր բառերը, բայց առանձին դեպքերում գտել է նույն բառի հոմանիշը: Օրինակ, «**ախտից կորստականաց**»-ի փոխարեն գրել է «**ախտից սպանողաց**», որով փաստորեն ավելի է սաստկացրել խոսքի իմաստը: Առավել հետաքրքրական է **պատուաստեցայց** բառի գործածությունը: Ճիշտ է, բանաստեղծի մյուս ստեղծագործություններում նույնպես հանդիպում ենք **պատուաստ** («զաստուածագործ պատուաստ պարծանաց պատուոյս պակկին», Ներբող Խաչի), **անպատուաստելի** («անպատուաստելի լուծեալ խորտակեաց», ն. տ.), **տիրապատուաստ** («պսակ տիրապատուաստ երկնահանճարն զհոտութեան», Ներբող Աստուածածնի), բայց միայն Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողում և Մատյանում է, որ բանաստեղծը ցանկանում է պատվաստվել Աստծու հետ, որպեսզի, ասում է Մատյանում, «Ջրոյ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ // **Վերստին գտեալ պնդեցայց՝ քաւեալ եւ ստեղծեալ կրկին** // **Ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց**» (Բան ԻԷ, տ. 150-152): Դա նշանակում է, որ այդ երկերն ստեղծելիս խզված է եղել բանաստեղծի և Աստծու միջև նախկինում առկա կապը, որի հետևանքով զրկված է եղել «անմահից կենացն անախտականաց»-ի հնարավորությունից, հետևաբար երազում է պատվաստվել Աստծու հետ, այսինքն՝ ներվել ու վերականգնվել իր պաշտոնում, որպեսզի նորից գտնի Աստծու «կերպարան լուսոյ նկարեալ յոգի»-ն ու պնդանա և կրկին հնարավորություն ունենա հուսալու «անմահից կենացն անախտականաց»-ի մասին: Ասվածի լավագույն հաստատումը գտնում ենք Մատյանի բազմաթիվ գլուխներում, բայց ամենից խտացված ձևով՝ ԻԷ բանում: Այն, նվիրված լինելով Մեղայ-ին (18 տող սկսվում և ավարտվում է մեղայ-ով, և հենց այդ բառով էլ ծածկագրել է իր կարգալուծության թվականը՝ 997 թ.²³) նրանում բանաստեղծը պարզորոշ գրել է. **Վերջին ինձ կրկին աշխար հոգեւոր, // Չի ի կորուստ եւ ի կործանումն ինձ երեւեցաւ, // Չի անդարձս վարատեցայ, // Չի որդիս թշնամի գրեցայ, // Չի ի բարձանց երկնից ընկեցայ, ... // Չի զիս ունին, առ որ չեմ*։ ... Չլոյսս ի մռայլ շրջեալ. ... // Չջախս**

²² **Պրիգոր Նարեկացի**, Մատենագրութիւնք, էջ 454:

²³ Այդ մասին մանրամասն տես Հ. Ղ. Միրզոյան, Նարեկացու առեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1:

* Դիտելի է, որ Մատյանի քննական քննադրի աշխատասիրողներից Պ. Խաչատրյանն այս տողի կապակցությամբ ծանոթագրել է. «Ինքնապարսավանքի՝ նման տողերն ու հատվածները, որոնք հաճախ են հանդիպում Մատյանի այլևայլ գլուխներում, ոչ միշտ է, որ ընդհանուր կարգի խոսքեր են, այլ ունեն ինքնակենսագրական սկիզբ, ոչ թե առհասարակ

փառաց շիջեալ, ... // Չշնորհին լքեալ, զուխտն ցրեալ, // Չաւանդն կենաց մոռացեալ, // Չհամարձակութեանն վատահոութին կորուսեալ, // Չստեղծիչդ էիս բարկացուցեալ, // Չանճառութիւն շնորհին ընդոտնեալ, // Չպատուոյն պատկեր այլայլեալ: Բերված մտքերից առանճնապես ուշագրավ է **Չհամարձակութեանն վրտահոութին կորուսեալ** դարձվածը, որի արժեքն ու իմաստը կարող է հասկացվել միայն Աստվածածնի ներքողի համապատասխան մտքի հետ համեմատելու միջոցով: Բանն այն է, որ վերջինիս յուրատեսակ հավելված-շարունակություն հանդիսացող «Նորին վերստին ի վերայ գրոյ անուան իւրոյ» ստեղծագործութեան մեջ, որի հատածների սկզբնատառերը հոդում են Գրիգոր, բանաստեղծը, դիմելով Տիրամորը, գրել էր. «Բոտեմք ի քէն աղերսիւ բանի, ... վերանկարեա զառ յաւազանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն ի գիր մատենի վերնում դպրոցիդ: Եւ զերգագրութիւն սակաւամասնեայ այսր գովեստի՝ արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի. ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ, և զգայական շնչոյս զպատկեր բանիս: Չի իբր ի գոյից երկուց զուգելոց ի մի խառնութիւն միոյ կենդանոյ, միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութեամբ, որպէս անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութեամբ: Թերևս ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին: Եւ զտոյութ արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոցն հաստատութեամբ հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան. փառաւորել ընդ քեզ և ընդ քոյսն յանդիման դիմաց պաշտելի և պսակելի քում աստուածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ զէութիւն անքակ և անքննելի սուրբ Երրորդութեանն ի միում տերութեան և արաչութեան»⁴: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն իրեն անվանում է **անեղծ պաշտոնյա** և ըստ այդմ՝ լիախոյս է, որ Տիրամոր խնդրանքով ինքը կարող է ահեղ դատաստանի ժամանակ ունենալ «անդատապարտ համարձակութիւն» և Տիրոջը հանդիպել «անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոցն հաստատութեամբ»: Փաստորեն Աստվածածնի ներքողում չի նշմարվում դժգոհության, դառնության, անհանգստության ու տագնապի, թերահավատության ու անվստահության, մեղավորության ու ինքնապախարակման հետք անգամ, մինչդեռ Մատյանում սկզբից մինչև վերջ այդ ամենը հորդում է վարար գետի պես, իսկ որ շատ կարևոր է, կորսված է նախկինում ունեցած «զհամարձակութեանն վատահոութիւն»: Միակ բանը, որ մնացել է անասան, բանաստեղծի հավատն է առ Աստված և նրա օգնությամբ այդ վիճակից դուրս գալու հույսը: Բանաստեղծն ինքն է հավաստում դա, ասելով. «**Քանզի հաւատացի, վասն որոյ եւ յաւսեցայ**» (ԺԱ, տ. 5): Բանաստեղծի տրամադրության այդօրինակ կտրուկ փոփոխության լավագույն դրսևորումներից է Մատյանի 2 բանը, որտեղ դիմելով Աստվածամորը, բանաստեղծը խնդրում է ներքողի հետ միասին այն ընդունել որպէս «ի քոյդ պաղատանս»: Քաջ հասկանալով իր անկման ահափորությունը՝ խնդրանքի դժվարությունն ու Տիրամորից մերժվելու հնարավորությունը՝ ասես փորձում է իբրև միջնորդի շահագրգռել նրան.

մարդուն են վերաբերում, այլ իրեն՝ բանաստեղծին: **Չի գիս ունին, առ որ չեմ** - Նարեկացին այստեղ ակնարկում է իր բարձր կոչումը, գիտնական-վարդապետի մեծ համարում ունենալը, որը, իբր, ինքն իր գործով չի արդարացրել» (Մատեան ողբերգութեան, էջ 1025-1026), ընդգծ. աշխատաս. է. - Հ.Մ.): Միանգամայն իրավացի է բանասերը, որ տվյալ դեպքում բանաստեղծը նկատի ունի հենց իրեն, տալիս է ինքնակենսագրական տեղեկություն, քայց այլ հարց է, թե ինչպես պետք է հասկանալ դա: Ասենք նաև, որ Նարեկացին առհասարակ չի գրում «ընդհանուր կարգի խոսքեր», այլ նրա խոսքը միշտ որոշակի է, քայց այդ որոշակիությունը հաճախ այնպես է արտահայտում, որ թողնում է ընդհանուրի տպավորություն: Եվ հենց դրանում է Նարեկացի բանաստեղծի մեծությունը, ինչպես նաև՝ նրան հասկանալու դժվարությունը:

⁴ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 421:

Բարձրացի՛ պատիւ քո ինն,
Եւ ցուցի՛ փրկութիւն իմ քեւ,
Եթէ զիս գոցես, տիրամայր,
Թէ ինձ ողորմեսցիս, սրբուհի,
Թէ զկորուսեալս շահեսցիս, անարատ,
Թէ զհարթուցեալս յանձանձեսցես, երջանիկ,
Թէ զամաչեցեալս յառաջ մատուցես, բարեշնորհ,
Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես, միշտ սուրբ կոյս,
Թէ զմերժեալս ընտանեցուցես, մեծարեալդ աստուծոյ,
Թէ յիս ցուցես զգթածութիւն, լուծիչդ անիծից,
Թէ զծփեալս հաստատեսցես, հանգիստ,
Թէ ի խոռվութեանցս յուզմանց փոխեսցես զիս, խաղաղարար,
Թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես, զովեալ,
Թէ վասն իմ մտցես ի հանդէս, մահու նահանջիչ,
Թէ զղառնութիւնս իմ անուշեսցես, քաղցրութիւն,
Թէ զբաժանմանն իմ խտրոց քակտեսցես, հաշտութիւն,
Թէ զանմաքրութիւնս իմ բարձցես, եղծման ընդոտնիչ,
Թէ զմատնեալս մահու փրկեսցես, կենդանի լոյս,
Թէ զլալեացս ձայն հատցես, բերկրութիւն,
Թէ զխորտակեալս կազդուրեսցես, դեղ կենաց,
Թէ ի կործանեալս յիս ակնարկեսցես, հոգելից,
Թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես, կտակ նուիրեալ,
Արհնեալդ միայն ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց:

Ահա այս համապատկերի վրա էլ հասկանալի է դառնում Մատյանի ԻԷ բա-
 ճի վերջին հատվածում Աստծու հետ պատվաստվելու, նրա լուսանկար հոգու կեր-
 պարանքը վերագտնելու և ամրապնդվելու, հետևաբար և մեղքերից քավված ու ա-
 նախտական անմահ կյանքի համար փրկված լինելու ձգտումը: Ըստ այդմ՝ բա-
 նաստեղծը գրել է.

Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցատյ
Մարդասիրեալ առ իս ժամանեցուցես, տեր Յիսուս Քրիստոս,
Չազդեալն Գիր լնանիլ ի յիս,
Եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս,
Որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ,
Չքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝
Վերստին գտեալ պնդեցայց՝ քառեալ եւ ստեղծեալ կրկին
Ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց,
Եւ քեզ, ընդ Հաւր, Հոգուվդ Սրբով փա՛ռք յախտեանս:

Կարծում եմ՝ վերը ասվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր
 Նարեկացին Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողը իսկապես գրել է
 Մատյանից անմիջապես առաջ, երբ արդեն դատապարտված ու կարգալույծ վի-
 ճակում էր, ուստի թե՛ մեկում և թե՛ մյուսում ձգտում է վերականգնել Աստծու հետ
 ընդհատված կապը, այսինքն՝ պատվաստվել Աստծուն կամ, որ նույնն է, վերաց-
 նել բանադրանքը և վերականգնվել հոգևոր պաշտոնում:

Հարկավ այստեղ կարելի էր վերջակետ դնել և համարել խնդիրը լուծված,
 քայց այդ դեպքում անպատասխան կմնար ընթերցողի մտքում ծագելիք իրավա-
 ցի հարցը. իսկ ինչո՞ւ՞ Մ. Սկրյանն այն գնահատել է որպես «սառը ակադեմիզմով»
 գրված, իսկ Պ. Խաչատրյանը՝ իբրև մյուս ներբողներից նվազ հաջողված, հետևա-

բար՝ վաղ շրջանում ստեղծված: Առերևույթ թվում է, թե թույլ ենք տալիս անլուծելի հակասություն. մի կողմից ասում ենք, որ բանաստեղծն այն ստեղծել է գրական-գեղարվեստական հասուն շրջանում, այսինքն՝ Մատյանին ամսիջականորեն նախորդած տարիներին, իսկ դա նշանակում է, որ բանաստեղծի նույնաբնույթ ստեղծագործությունների շարքում այն պետք է լիներ եթե ոչ ամենակատարյալը, ապա գոնե կատարյալներից մեկը, իսկ մյուս կողմից ըստ էության սխալ չենք համարում Մ. Մկրյանի և Պ. Խաչատրյանի տված գնահատականները: Ասում ենք առերևույթ, որովհետև բանաստեղծի կյանքի և գործունեության մասին մեր դիտարկած նոր փաստերի լույսի ներքո հեշտությամբ լուծվում է այն՝ փարատելով վերը կատարված եզրակացության հանդեպ ամեն կասկած ու տարակուսանք:

Ինչպես ասվեց, դեռևս Գ. Ավետիքյանը, հիմք ընդունելով Առաքելոց ներբողում բանաստեղծի արտահայտած՝ «Քանզի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանն լուծեան շարժեալ կարգ բանիս» միտքը, եզրակացրել է, որ տվյալ ներբողը գրվել է բանաստեղծի կյանքում տեղի ունեցած ստեղծագործական առժամանակյա դադարից հետո, որը հաջորդել է Ապարանից խաչի պատմությանը և նրան կից երկու ներբողին՝ բնականաբար նախորդելով Մատյանին: Իրականում բանաստեղծը նույնպիսի խոստովանություն կատարում է նաև Մատյանի մի շարք գլուխներում՝ անշուշտ փոխելով արտահայտման ձևը: Օրինակ՝ ԺԵ բանում, իրեն համեմատելով ավետարանական մոլորյալ ոչխարի հետ, բանաստեղծը գրել է.

**Իսկ կրկին առակն, որ առ իս,
Որ ոչխարին տրուպն տարացուցի,
Որ յետին անզգայութեանն էր մատնեցեալ, մուրեալ,
Եւ ի լերինն, ուր ոչ է այցելութիւն,
Ընդ գազանականացն դիւաց եւ կոոցն վայրենութեան թափառեալ,
Ո՛չ մերձատր գոլ սակաւ մի հաւտին:
Ո՛չ բան ունէի, որով եւ զցաւոցն աղէտ պատմէի,
Ո՛չ ձեռն ձգողական, որ համերցն է ազդողական:**

Հարկ կա՞ ստելու, որ «ի դադարմանն լուծեան» և «ո՛չ բան ունէի» արտահայտություններն ըստ էության հոմանիշներ են, որ ցույց են տալիս նույն անհուսության վիճակը, իսկ «ո՛չ ձեռն ձգողական» արտահայտությամբ ավելի ուժեղացնելով պատկերը՝ նշում է մարմնական-ֆիզիկական անգործությունը:

Իսկ ահա Մատյանի ԾԴ բանում ասում է, որ կյանքի ծովում լինելով ալետանջ, հողմից զգված, ուժգին լկանքներից խիստ տագնապահար վիճակում՝ հանկարծակի հայտնվել է գարնանային վարար գետի հորձանքի մեջ, որտեղից պատահաբար ավի է շարժվել ջրահեղձ ու անշնչացած, որ ոչինչ չի լսում, ոչինչ չի հասկանում, ոչ մի շարժում չի կարողանում կատարել: Մի խոսքով՝ «Կոոցն գարշութեան մմանեալ // Թափուր յազդմանէ բարեաց իմաստից»:

Վերջապես, ժամահարի կոչնակին նվիրված գլխում (Բան ԴԲ) նախ՝ հայտնում է, որ կոչնակի ձայնից «սքափեցաք, կանգնեցաք՝ ի վեր յարուցեալ ի մեռարինակս թմբմանէ» (տ. 4-5), իսկ այնուհետև ծնրադրաբար երկրպագելով բոլորի ստեղծողին՝ ավելացնում է, «որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս զարինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր ի դադարմանէ դժխական անբանութենէ, ի խնդիր ելեալ կոչեցեր զպակասամիտս ի գինիդ ուրախութեան, արարեր զսոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սէր փեսայիդ» (տ. 19-23): Եթե այս ամենի հետ մեկտեղ հիշենք նաև, որ Ապարանից խաչի պատմության և նրան հաջորդող երկու ներբողի ընդհանուր հիշատակարանում դրանց պատվիրատու «Մոկաց հզօր դիտապետ» Ստեփանոսին հայտնել էր, «որ

յարածամ դեզերիմ յընթեռնուլն», ապա միանգամայն պարզ կդառնա, որ իսկապես բանաստեղծի կյանքում տեղի է ունեցել ստեղծագործական առժամանակյա դադար, որը, իմ խորին համոզմամբ, հետևանք էր 997 թ. նրա կարգալուծության: Ինքնին հասկանալի է, որ «յետին անգգայութեանն» մատնված և «յագղմանէ բարեաց իմաստից» թափուր վիճակից դուրս գալուց, «ի դադարմանէ լուութեան» շարժվելուց կամ «ի դադարմանէ դժոխական անբանութենէ» և «ի մեռաւրինակս թմբբմանէ» կենդանանալուց հետո բանաստեղծը ոչ մի կերպ չէր կարող միանգամից վերագտնել ստեղծագործական նախկին տարերքը և արարել գրական-գեղարվեստական տեսակետից անթերի գործեր: Այստեղից էլ Առաքելոց և Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողների թե «սառը ակաղետմիզմով» գրված լինելն ու «հուզական հագեցվածությամբ» աչքի չընկնելը (Մ. Սկրյան) և թե՛ «գրական ժանրի սահմանում բանաստեղծի տաղանդի ու կարողությունների պակաս լիարժեք դրսևորումը» (Պ. Խաչատրյան):

Այո՛, ժամանակ էր պետք, որպեսզի բանաստեղծը կարողանար ոչ միայն վերագտնել նախկինում ունեցածը, այլև բազմապատկել ու հազարապատկել այն, ինչպես վարվել է Մատյանում: Ըստ այդմ, եթե Առաքելոց ներբողով բանաստեղծը, ինչպես ինքն է հավաստում, կարողացել է շարժվել ու դուրս գալ «ի դադարմանէ լուութեան» վիճակից, ապա Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողով ուղղակիորեն նախապատրաստվել է իր գլուխգործոցի արարմանը: Դրանով պետք է բացատրել մի կողմից այդ երկու ներբողների, իսկ մյուս կողմից Հակոբ Մծբնա հայրապետին նվիրված ներբողի և Մատյանի գրական-գեղարվեստական ու լեզվական ակնհայտ ընդհանրությունները:

Г. К. МИРЗОЯН — К вопросу о времени написания оды Григора Нарекаци «К святому Якову». — Хотя среди дошедших до нас од Григора Нарекаци ода «К святому Якову» имеет исключительную значимость, она тем не менее не изучена должным образом, не уточнено время ее написания, не выяснены ее роль и место в литературном наследии поэта, и в частности при создании-построении «Книги скорби». В этом причина того, что о литературно-художественных достоинствах и времени написания данного произведения высказывались неверные мнения, делались не выдерживающие критики предположения.

В статье названная ода детально сопоставляется с другими произведениями того же жанра, а также с «Книгой скорби». В результате, выявив и показав целый ряд идейных, психологических, языковых и литературно-художественных сближений между одой и «Книгой скорби», автор статьи приходит к выводу о том, что ода «К святому Якову» была не ранним опытом Григора Нарекаци в этом жанре, как предполагали некоторые нарекациеведы, а по существу — последним. По глубокому убеждению автора, она была написана после оды «Апостолам», но, вне всяких сомнений, непосредственно перед «Книгой скорби» и стала своеобразным прообразом, предтечей последней.